

ԱՌԱՋԱԲԱՆ

«Զյաւեյուլ զանեղեալսն՝ յընդունայն ան-
մունս բանից. չնուագեցուցանել զեղեայսն և
կարճակեալս պատմել բանիւք անփութութեամբ.
այլ զբնան ռոջախոսի զգուտութեամբ բերել ի
յայտնութիւնս»:

Ղ. ՓԱՐՊԵՑԻ

Այս հատորի նյութերը հավաքել ենք դարձյալ Հայկական ՍՍՌ Մի-
նիստրների Սովետին կից Ձեռագրատան (Մատենադարանի) գրչագրերից,
օգտագործելով Մատենադարանի գիտ. աշխատակիցներ՝ պրոֆ. Սշ. Աբրա-
համյանի, Լ. Խաչիկյանի, Ս. Լալաֆարյանի, Վ. Խեչումյանի և ուրիշների
կազմած ընդհանուր քննարկական և անտիպ մատյանները¹:

Որոշ նյութեր վերցրել ենք նաև Մատենադարանի արխիվային ըած-
նում գտնվող Տիրայր վարդապետի արխիվից, որի մեջ կա Օքսֆորդի Բող-
լեյան գրատան հայերեն ձեռագրերի ցուցակը: Միաժամանակ օգտվել ենք
նաև Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Պատմության ինս-
տիտուտում պահվող Մեսրոպ Տեր-Մովսիսյանի հայերեն ձեռագրերի լիա-
կատար ցուցակից և Լեոյի արխիվից: Սրանցից քաղել ենք թեև մասն,
բայց ուշագրավ ու հետաքրքիր բնագրեր:

Սույն հատորը լրիվ դարձնելու նպատակով, 1951 թ. ստուգեցինք նաև
Էջմիածնի Ճեմարանում պահվող շուրջ 90-ի հասնող հայերեն ձեռագրերի
բովանդակությունը, բայց նրանց մեջ համապատասխան նյութեր չգտնե-
վեցին:

Դավիթ Բաղիշեցու ժամանակագրությունը քաղել ենք Բաքվի Վ. Ի.
Լենինի անվան քաղաքային գրադարանում պահվող 1665 թ. ընդօրինակ-
ված ձեռագրից², որը անձանոթ է հայագիտությանը:

¹ Պրոֆ. Լ. Մելիքսեթ-Բեկը սույն ժողովածուի առաջին հատորի մասին գրած իր գրա-
խոսականում (Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի «Տեղեկագիր», Հասարակական
գիտությունների բաժանմունք, 1952 թ. № 2, էջ 111—114) նկատել էր, որ չենք նշել
պրոֆ. Աշ. Աբրահամյանի աղբյուրագիտական աշխատությունը՝ «Համառոտ բերիոգրաֆիա
Հայկական ՍՍՌ Մատենադարանի գրչագիր մասն ժամանակագրերի» (Երևանյան նյու-
թեր, հրատ. Մատենադարանի, 1, 1940, էջ 207—232), հավանաբար մեզ ծանոթ չլինելու
պատճառով: Սակայն, հիշյալ բերիոգրաֆիան մեզ ծանոթ է եղել, որի մասին գրել ենք
նույնիսկ գրախոսական (Հայկական ՍՍՌ Գիտ. ակադեմիայի Հասարակական գիտությու-
նների բաժանմունքի «Տեղեկագիր», 1948 թ., № 7, էջ 81—84):

² Այստեղ կար հայերեն չորս ձեռագիր, չմշտված և չհամարակալված: Վերջերս
այս ձեռագրերը հանձնվել են Բաքվի Նիզամիի անվան Պետական պատմական թանգարա-
նին: Այստեղ պահվող հայերեն ձեռագրերում ես մեզ հետաքրքրող նյութեր չգտնվեցին:

Առաջին հատորի առաջաբանում խոստացել էինք հաջորդ հատորում հրատարակել նաև միջնադարյան հայ ուղեգրությունները, բայց հավաքված նյութի ծավալը գերազանցեց մեր սպասելիքները, ուստի որոշեցինք ճանապարհորդական այդ նոթերը ևս զետեղել Գ հատորում:

Հնարավորություն հունենալով տարիներ շարունակ նախապես զբաղվելու միայն նյութերի հավաքմամբ, սույն հատորը ես հարկադրված եղանք կազմել առաջինի սկզբունքներով՝ երկուսի մեջ էլ հաջորդաբար տալով XIII—XVIII դարերի նյութերը, փոխանակ Ա հատորում զետեղելու XIII—XIV դարերի նյութերը, Բ և Գ հատորներում՝ հաջորդ դարերինը, հերթականությամբ: Այս դեպքում, իհարկե, առանձին հարցերի մասին խոսելիս, կրկնություններն անխուսափելի են, թեև աշխատել ենք այդ հասցնել նվազագույնի:

Այս հատորի նյութերը նույնպես բազմազան են, որոնք մեծ մասամբ վերաբերում են հայ ժողովրդի քաղաքական պատմությանը: Հատկապես շատ հետաքրքիր են Հեթում Պատմիչի Խրոնիկոնի XIII դարին վերաբերող տվյալները, Անանուն Սերաստացու (XIII դ.), Ներսես Պալիեցի, Դավիթ Մերդինցու, Մովսես Արծկեցու, Հովհաննիսիկ Ծարեցու, Մարտիրոս դի Առաքելի և այլոց գործերը: Հետաքրքիր և ուշագրավ տեղեկություններ կան միջֆեոդալական պայքարի, ծանր հարկապահանջության մասին (Դավիթ և Վարդան Բաղիշեցիներ, Հակոբ Տիվրիկցի և այլն), հայ ժողովրդի ներքին կյանքի, կենցաղային առանձին երևույթների, սոցիալական հարցերի վերաբերյալ: Բազմաթիվ տեղեկություններ ենք գտնում տեղադրական հարցերի, հասարակական, քաղաքական, եկեղեցական գործիչների մասին: Ներկայացվող նյութերը հետաքրքրությունից զուրկ չեն նաև լեզվաբանների համար:

Հատորի վերջում, որպես հավելված, հինգ բնագրերի համեմատականությամբ, կցեցինք նաև Հակոբ Կարնեցու, գիտությանը ծանոթ, բայց հազվագյուտ դարձած մի աշխատությունը, XVII դարի Կարինի կուսակալության մեջ մտնող գավառների և Կարինի աշխարհագրական և տնտեսական նկարագրությունը: Այստեղ հետազոտողները թանկարժեք և խիստ ուշագրավ տեղեկություններ կգտնեն Կարինի և շրջակայքի, սահմանակից գավառների բնակչության՝ հայերի, վրացիների, թուրքերի քաղաքական, իրավական, տնտեսական, պատմական, կենցաղային և այլ հարցերին վերաբերող:

Սույն հատորն ընդգրկում է թվով 58 մեծ ու փոքր բնագրեր, որոնցից առավել մանրերը (թվով 33), տրված են ժամանակագրական մանր հատվածներ՝ վերնագրի տակ:

Առաջին ջանքամ հրատարակվող նյութերից բացի, հատորում զետեղված են նաև մի քանի բնագրեր, որոնք, թեև նախկինում լույս են տեսել, սակայն այս հրատարակության մեջ օգտագործել ենք նրանց նոր օրինակները, և տվել բնագրերը ոչ միայն լրիվ, այլև տարբերակներ ունենալու դեպքում վերջիններիս տարբերվածները: Մնացածները սոսկ արտատպություն են նախորդ հրատարակություններից:

Այս հատորը լույս է տեսնում նախորդի սկզբունքներով (տես «Մանր ժամանակագրություններ», հտ. 1, էջ 15):

Հատորում բնագրերը դասավորված են հեղինակների ժամանակագրական կարգով: Նյութերի օգտագործումը հեշտացնելու նպատակով, յուրաքան-

չյուր բնագրի սկզբում տվել ենք ներածական, որտեղ նշված են ամեն մի բնագրի ընդգրկած ժամանակագրական սահմանները, քննված են հեղինակների, ժամանակագրությունը կազմելու, օգտագործած աղբյուրներին վերաբերող և այլ հարցեր: Յուրաքանչյուր բնագրի վերջում գրված են ծանոթագրություններ, որտեղ տրվում է առանձին հեղեղությունների պատմական ֆոնը, խոսվում է բնագրի տեղեկությունների հավաստի լինելու և բանասիրական այլ հարցերի մասին: Համապատասխան ծանոթագրություններում օգտագործել ենք մատենագրական հրատարակված անհրաժեշտ նյութեր, շատ հաճախ էլ բազմաթիվ անտիպ նյութեր, որ քաղել ենք Նրեվանի Պետական Մատենադարանի ձեռագրերի հիշատակարաններից, դրանով իսկ ավելի ճշմարտացի առանձին դեպքերի մասին եղած պատմական տեղեկությունները: Հատորում թե՛ անտիպ և թե՛ հրատարակված բնագրերը բերված են նույնությամբ, չի փոփոխված ուղղագրությունը: Բացահայտ սխալներն ուղղել ենք, օրինակ «Դիւան»-ի Ժ հատորում երկիցս գործածված է «Եկին ի բանտի-մահուց» (էջ 127), «Դնացին հասան բանաի մահուն» (էջ 142): «Բանտի-մահուն» փոքրատառով գրված լինելու պատճառով, միտքը մնում էր անհասկանալի, մինչդեռ խոսքը վերաբերում է Ալադադից սկիզբ առնող և Վանա լիճ թափվող Բանտի-մահու գետին (պատմական Առեբերանի գավառում): Մեր հրատարակության բնագրում ուղղել ենք այն և նշել այսպես՝ «Բանտի-մահուց» (էջ 484) կամ «Բանտի-մահուն» (էջ 492): Մի այլ օրինակ. Հեթում Պատմիչի խոնրիկոնում գրված է «Տուկն նոր մարդոյ»: Հրատարակության բնագրում ուղղել ենք և նշել «Տուկն Նորմանգոյ» (էջ 56). միաժամանակ Ծանոթագրություններ բաժնում տվել ձեռագրի պահած ձևը (էջ 83, ծանոթ. 48):

Բոլոր տեսակի հապավումները, պայմանական նշանագրերը բաց ենք արել, նշանակել կետագրությունը:

Բնագրում թե՛ այսպես կոչված քրիստոնեական և թե՛ հայկական տոմարի տարեթիվերը գրված են հայերեն տառերով: Նման դեպքերում, դրա կողքին, կլոր փակագծերում, նույնը նշել ենք արաբական թվանշաններով. օրինակ, Հեթում Պատմիչը խոնրիկոնում գործածում է «Ի Քրիստոսէ ՌՄՂԴ», վերջինիս մոտ ավելացրել ենք (1294), իսկ հայկական տոմարի դեպքում, մտովին ավելացնելով 551, գրել ենք համապատասխան թվականը. օրինակ՝ «Ի թվին ՉԻՆ», հրատարակության բնագրում տվել ենք այսպես՝ «Ի թվին ՉԻՆ (1276)»: Նշված ձևով չենք վարվել հատորի առաջին բնագրի հետ (էջ 3—27), որովհետև վերջինիս կառուցվածքը թույլ չէր տալիս նման բան անել: Քանակ արտահայտող թիվերը ձեռագրերում ևս գրված են հայկական տառերով, իսկ հրատարակության մեջ, դրանց կողքին, կլոր փակագծերում, ավելացրել ենք արաբական համապատասխան թվանշաններ: Անկյունավոր փակագծերում՝ [] նշել ենք հեղինակի կողմից վրիպած կամ բնագրի վնասվելու պատճառով հղծված տառերը կամ բառերը: Իսկ սուրանկյուն փակագծերում՝ < > նշված են հեղինակների կողմից կրկնված վանկերը կամ բառերը: Հեղինակի սխալ գործածած տառերը ցույց ենք տվել շեղագիր: Հավելվածում վերջինս օգտագործված է նաև այլ նկատառումով: Այն բառերի կողքին, որ չենք հասկացել, գրել ենք հարցական նշան:

¹ Այդ մասին անհ ներքևում, էջ 547:

Ուղղահայաց երեք գծերը՝||| ցույց են տալիս բնագրի վնասված լինելը:

Ծանոթագրություններում, մի քանի տեղ, օգտագործել ենք արար հեղինակների տվյալները, որ սիրով տրամադրեց հանգուցյալ Հակոբ Նալ-րանդյանը:

Մի երկու բնագրում կատարել ենք աննշան կրճատումներ այն հատ-վածների, որոնց մեջ տրված տեղեկությունները զուրկ են պատմական որևէ արժեքից¹, կրճատումները նշել ենք բազմակետերով՝...

Հատորի վերջում գտնվում են օգտագործված ձեռագրերի բիրլիոգրա-ֆիան, օտար բառերի բառարանը, աշխարհագրական, անձնանունների և առարկայական ցանկեր: Օտար բառերի բառարանում գտնվում են մոտա-վորապես տասը տարրեր լեզուներով շուրջ 700 բառեր, որոնց բացատրու-թյունը վերցրել ենք հետևյալ բառարաններից.

1. Ստ. Մալխասեանց, Հայերէն բացատրական բառարան, Երևան, 1944—1945 թթ., հտ. I—IV:

2. Ցուկ. Պօղաճեան, Համառոտ բառարան ի տաճկականէ ի հայ, Վիեննա, 1841:

3. Բառարան պարսկերէն ի Գէորգայ դպրէ Յովհաննէսեան Պայատցոյ, Կ. Պոլիս, 1826:

4. А. Б. Вейсман, Греческо-русский словарь, С.-Петербург, 1899.

5. Краткий латинско-русский словарь, Москва, 1941.

6. Проф. К. А. Ганшина, Французско-русский словарь, Москва, 1946.

7. М. О. Аттая, Словарь арабско-русский, Москва, 1913.

Բառարանը կազմելիս, առանձին դեպքերում, մեզ օգնել են նաև ընկ-ընկ. Հ. Ս. Անասյանը և Հ. Դ. Փափազյանը:

Ծանոթագրություններում գործ ենք ածել հետևյալ համառոտագրու-թյունները՝

ՏՎՑ—Յ. Տաշեան, Ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխի-թարեանց ի Վիեննա, հտ. Ա, Վիեննա, 1895:

ՏՅԿՄՎ—Յ. Տաշեան, Ցուցակ հայերէն ձեռագրաց կայսերական Մատե-նադարանին ի Վիեննա, Վիեննա, 1891:

ՍՎՑ—Բ. Սարգիսեան, Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադա-րանին Մխիթարեանց ի Վենետիկ, հտ. I, Վենետիկ, 1914:

Նույնը՝ հտ. 2-րդ, Վենետիկ, 1924:

ԼՑՎ—Ծ. Լալայեան, Ցուցակ հայերէն ձեռագրաց Վասպուրականի, Թիֆ-լիս, 1915:

ՄՏՄՑ—Մեսրոպ Տեր-Մովսիսյան, Ցուցակ հայերեն ձեռագրերի (ան-տիպ, տես Հայկական ՍՍՏ Գիտ. ակադեմիայի Պատմության ինստիտուտի արխիվ):

¹ Պրոֆ. Մելիքեյան-Բեկը վերոհիշյալ զբախտականում մեզ կշամբում էր այն բա-նի համար, որ, իբր թե մենք, սուրն ժողովաւորի 1-ին հատորում «տեղ-տեղ տեքստերի մեջ կրճատումներ ենք կատարել» («Տեղեկագիր», 1952, № 2, էջ 114), սակայն, անհրաժեշտ ենք համարում նշել, որ նման բան չի կատարվել, բացի դուրս գցված մեկ բառից:

ՀԶՀ—Լ. Ս. Խաչիկյան, ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Երևան, 1950:

ՄԺ, 1.—Վ. Ա. Հակոբյան, Մանր ժամանակագրություններ, XIII—XVIII դդ. հտ. 1, Երևան, 1951:

Լեն-Պուլ—Лэн-Пуль С., Мусульманские династии, СПб, 1899.

1992—1995 թթ.

Վ. Հ.

